



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ՎՐԱՍՏԱՆ, ԻՐԱՆ, ԱՄՆ

ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻՆ
ԱՌՆԶՎՈՂ ՀԱՐՑԵՐ

2

Հունվար
2008

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

В Грузии состоялись президентские выборы	3
Внеочередные президентские выборы 5 января 2008г. в Грузии: взгляд из Джавахка	5
Վիրահայությունը Վրաստանի նախագահական ընտրություններում	7
Ընտրությունները Վրաստանում. ադրբեջանական գործոն	11
Противостояние президента Саакашвили и оппозиции в Грузии	14
Некоторые информационные аспекты выборов в Грузии	15
Հետընտրական Վրաստան. ճգնաժամի հաղթահարում	17
Իրանը խորհրդարանական ընտրությունների նախաշեմին	19
Президентская гонка в США	22
Թուրքիայի կրոնափոխ հայերին առնչվող որոշ հարցերի շուրջ	30
Диаспоральный ресурс Армении и функциональная стыковка Черноморского и Каспийского бассейнов	34

В ГРУЗИИ СОСТОЯЛИСЬ ПРЕЗИДЕНТСКИЕ ВЫБОРЫ

Согласно официальным итогам выборов, Михаил Саакашвили одержал победу в первом туре. Но оппозиция Грузии не считает президента Саакашвили легитимным. Эти выборы были тотально сфальсифицированы. Саакашвили проиграл в крупных региональных центрах, получив менее 50% голосов.

Даже по официальным данным, в Тбилиси он набрал 31%, против Саакашвили проголосовало 69%. Кандидат от объединенной оппозиции Леван Гачечиладзе в Тбилиси получил 39%, а в центральных округах – до 50%. В центральном округе, который я представляю в парламенте, Саакашвили набрал 25%, то есть из 4 избирателей 3 не поддержали экс-президента.

Саакашвили проиграл в крупных городах. Он проиграл в Батуми, набрав 38%, даже по официальным данным. А реально он набрал около 30%. Батуми – столица Абхазии, в которой Саакашвили также проиграл. Впервые в истории власти проигрывают в Абхазии, в которую Саакашвили вложил немало средств.

Аналогичная ситуация в Кутаиси – втором по численности городе Грузии. По официальным данным, Саакашвили набрал около 40% голосов, по факту – около 30%. Саакашвили проиграл в Рустави, проиграл в Поти, проиграл в Телави. То есть почти все региональные центры проиграны.

Исключение – Зугдиди и Мингрелия. Здесь Саакашвили получил большинство. При этом мы не исключаем, что в Зугдиди он действительно занял первое место.

Но он проиграл абсолютное большинство маленьких городов и районных центров. На те участки, которые нам удавалось отследить, приходило до 900 избирателей. Саакашвили получал меньше половины голосов. Однако там, где защитить голоса не получалось, выходило, что в одном районе на один участок приходило до 900 избирателей, а на другой до 1500, и из них 1300-1400 якобы голосовали за Саакашвили.

При этом в регионе Квемо Картли, где компактно проживают грузинские азербайджанцы, Саакашвили набрал около 90%. Но при таком показателе получается, что избиратели голосовали во многих участках в течение 9-17 секунд. Так что весьма вероятно, что за Саакашвили проголосовало реально гораздо меньше избирателей. Та же самая ситуация в регионе, где компактно проживают армяне, – в Джавахетии. Это не означает, что национальные меньшинства поддерживают Саакашвили. В крупных городах, в Тбилиси представители национальных меньшинств голосовали так же, как этнические грузины.

Выходит, что Саакашвили фактически приписал себе большинство. И, по официальным данным, он президент уже в первом туре. Но он президент не региональных центров, а отдаленных районов.

С политической точки зрения, это означает, что разговоры о слабости оппозиции остались в прошлом. Даже Саакашвили признает силу оппозиции и говорит о необходимости диалога с ней. Сила оппозиции признана и в окружении Саакашвили, и в администрации американского президента Дж.Буша среди тех, кто делает ставку на Саакашвили. Запад признает итоги выборов, но с трудом. Он требует исправить допущенные нарушения до парламентских выборов, которые, судя по итогам плебисцита, состоятся весной. Именно на этом сроке настаивала оппозиция.

Мы достигли больших результатов. Я, как один из лидеров Республиканской партии, доволен работой нашей партии. Наши представители возглавляли работу почти половины избирательных штабов, почти везде у нас хорошие результаты.

Саакашвили отказывается идти на второй тур. Он выписал себе чек в 52%. Но поскольку реально он набирает менее 50%, Саакашвили не является легитимным президентом, мы не признаем его легитимность.

Так что в ближайшее время ситуация не будет спокойной. Саакашвили проведет свою инаугурацию, а мы перейдем к парламентской кампании. Я уверен, что на парламентских выборах оппозиция одержит победу. Естественно, что Запад, НАТО потребуют устранить недостатки и нарушения на выборах. Я полагаю, что Запад окажет на Саакашвили более серьезное давление, чем во время президентских выборов. Может быть, Запад опасается дестабилизации. Но нелегитимный Саакашвили более способствует дестабилизации, чем второй тур президентских выборов.

Давид Бердзенишвили¹

¹ Давид Бердзенишвили - сопредседатель парламентской фракции «Демократический фронт» от Республиканской партии, один из лидеров объединенной оппозиции, Тбилиси.
<http://www.eurasianhome.org/xml/t/expert.xml?lang=ru&nic=expert&pid=1394&qmonth=0&qyear=0>. 09.01.2008.

ВНЕОЧЕРЕДНЫЕ ПРЕЗИДЕНТСКИЕ ВЫБОРЫ 5 ЯНВАРЯ 2008г. В ГРУЗИИ: ВЗГЛЯД ИЗ ДЖАВАХКА

5 января 2008г. на всей территории Грузии состоялись внеочередные президентские выборы. По данным ЦИК Грузии, на выборах в первом туре с примерно 53% набранных голосов победил бывший (с января 2004г. по ноябрь 2007г.) президент М.Саакашвили. При всем этом результаты выборов, удостоенные в целом довольно положительных (хотя и однозначно политически мотивированных) оценок со стороны международных и европейских наблюдателей, были сразу же опротестованы представителями грузинской оппозиции. Практически на второй день после выборов в Тбилиси и некоторых регионах страны начались массовые акции протеста и митинги представителей объединенной оппозиции, обвиняющих власти в массовых фальсификациях результатов президентских выборов 5 января 2008г.

При этом важно отметить тот факт, что М.Саакашвили проиграл лидеру Объединенной оппозиции Левану Гачечиладзе выборы в столице, и основные голоса он набрал за счет результатов в различных регионах страны, в том числе компактно населенных армянами и азербайджанцами – Самцхе-Джавахети и Квемо Картли. Однако чем можно объяснить тот факт, что этнические меньшинства Грузии, которые за весь период первого президентства М.Саакашвили громко заявляли об усиливавшихся фактах дискриминации и ожесточившемся экономическом и политическом давлении со стороны новых грузинских властей, тем не менее, в подавляющем большинстве своем показали на выборах такие ошеломляюще высокие результаты поддержки кандидата Михаила Саакашвили?!

Естественно, весьма логично в первую очередь учитывать то обстоятельство, что в связи с намного большим политическим напряжением в Тбилиси и значительно более явными протестными настроениями в столице действующие власти имели больше возможностей осуществлять фальсификации в различных регионах страны, особенно в районах с компактным проживанием этнических меньшинств, таких, как армянонаселенный Самцхе-Джавахети или азербайджанонаселенный Квемо Картли.

Вместе с тем надо учесть, что армянское и азербайджанское этнические меньшинства Грузии за весь постсоветский период практически не участвуют в общественно-политической жизни этой страны, в подавляющем большинстве своем не владеют грузинским языком и почти не представлены среди политической элиты этой страны. В то же время они зачастую подвергаются дискриминации на национальной почве, в минимальной степени представлены в органах власти, ощущают свою «ненужность» и враждебность со стороны власти и определенной части грузинской общественности. В результате, отношение к прошедшим 5 января 2008г. президентским выборам в армянонаселенном регионе Самцхе-Джавахети (как и в основном азербайджанонаселенном Квемо Картли) было более чем пассивным и равнодушным.

Пользуясь этим, именно в силу безразличия местного армянского населения к выборам власти смогли в Джавахке в максимальной степени использовать административный ресурс в пользу Михаила Саакашвили. Кроме этого, на настроения армянского населения повлиял тот факт, что предвыборная кампания в Джавахке проводилась в пользу М.Саакашвили также с участием «емиссаров» из Еревана и Москвы, представляющих определенные круги джавахкской «диаспоры», имеющих тесные политические и экономические контакты с нынешними грузинскими властями.

Можно отметить, что в выборах в Джавахке в реальности приняло участие минимальное количество избирателей – вероятно, не более 15-20%. При этом, как свидетельствуют очевидцы в самом этом регионе, большинство немногочисленных реальных участников голосования отдали свои голоса против Михаила Саакашвили и в пользу кандидатов от оппозиции – Левана

Гачечиладзе и Бадри Патаркацишвили. Впрочем, результаты реального голосования в Джавахке уже не имели никакого значения, т.к. все результаты по количеству принявших участие в выборах и проголосовавших за Михаила Саакашвили были просто «нарисованы» местными избиркомами без всякого подсчета через несколько часов после закрытия избирательных участков вечером 5 января. Избирательная комиссия Ниноцминды сообщила, что во внеочередных выборах приняло участие более 90% избирателей, из которых около 92% проголосовало за М.Саакашвили. Практически аналогичная ситуация и почти аналогичные цифры были получены и в Ахалкалакском районе.

В силу пассивности армянских избирателей и боязни репрессий со стороны грузинских властей столь откровенные фальсификации не привели ни к каким протестным проявлениям в Джавахке, кроме проявления скрытого и непубличного недовольства. Основные местные общественно-политические организации или сохраняли нейтралитет за весь период выборов (например, Совет общественно-политических организаций Самцхе-Джавахети), или же поддерживали М.Саакашвили, а некоторые – как, например, «Вирк», хотя и заявили о поддержке оппозиционного кандидата Л.Гачечиладзе, но в реальности не предприняли в этом направлении никаких практических шагов.

Указанная ситуация является вполне закономерной в условиях, когда этнические меньшинства Грузии перманентно остаются вне грузинского социума, когда для них не является политически актуальной и востребованной ни одна из действующих общегрузинских политических партий, а ныне существующий запрет на регистрацию действующих региональных политических партий лишает местное население возможности реально реализовать свои конституционные права в процессе принятия решений и создания равных возможностей выбирать и принимать участие в управлении своей страной.

Поэтому ситуация с низкой активностью армянского населения в ходе президентских выборов 5 января и отсутствие реакции на все явные факты фальсификации результатов со стороны властей не должны никого удивлять. В Джавахке местное население в ходе всех предыдущих президентских и президентских выборов путем фальсификаций всегда «голосовало» за представителей действующих властей – будь то Звиад Гамсахурдия в 1990-1991 гг., или Эдуард Шеварднадзе и «Союз граждан Грузии» вплоть до 2003г., или же Михаил Саакашвили и «Единое национально движение» после «Революции роз».

Как отмечает известный грузинский политолог Гия Нодиа, несмотря на то, что армянское и азербайджанское меньшинства в Грузии в основном проживают на территориях, примыкающих к их «этническим родинам», основная региональная «проблема не в этническом сепаратизме или ирредентизме. Хотя некоторые грузины и подозревают сообщества меньшинств в тайных националистических устремлениях, последние не предъявляли никаких сепаратистских требований и не организовывали ирредентистских движений. Основной повод для озабоченности – отсутствие социально-политической интеграции этих меньшинств и низкий уровень их реального участия в зарождающихся демократических институтах Грузии»¹.

Многие грузинские эксперты и политические деятели только сейчас начинают осознавать, что значительная часть населения Грузии (не менее 16-17% от общего числа жителей страны) – в виде представителей этнических меньшинств – давно уже не рассматривает существующие партии Грузии или возникающие оппозиционные движения как механизм своего участия в общественно-политической жизни этой страны.

Сергей Минасян

¹ *Nodia G., Scholtbach A.* The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. IMD, ODIHR, CIPDD: Eburon Delft, 2006. P.72.

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վրաստանում վերջին նախագահական ընտրություններից անմիջապես հետո մի շարք լրատվական միջոցներ տեղեկություններ տարածեցին ընտրություններին մասնակցած ազգային փոքրամասնությունների, այդ թվում և հայերի, դիրքորոշումների, ընտրական վարքագծի և մասնակցության մասին: Հիմնականում նշվում էր, որ վիրահայությունը, հատկապես ջավախահայությունն իր ձայնը տվել է գործող նախագահ Մ.Սահակաշվիլուն¹: Ըստ Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ Ախալքալաքում, որտեղ հայերը կազմում են բնակչության 94%-ը, ընտրողների ձայների 83.04 %-ը, իսկ Նինոծմինդայում, որտեղ հայերը կազմում են բնակչության 96%-ը, ընտրողների 90.18%-ը քվեարկել է Մ.Սահակաշվիլու օգտին²:

Նախ նշենք, որ Վրաստանի ընտրացուցակներում ազգային փոքրամասնությունները բավական ծանրակշիռ մաս են կազմում: Այսպես, միայն հայերն ու ադրբեջանցիները միասին վերցրած կազմում են ընտրողների մոտ 10%-ը: Հետևաբար, նախագահական աթոռի թեկնածուների համար չափազանց կարևոր էր ազգային փոքրամասնությունների նախապատվությունների հաշվառումը: Արդյունքում՝ անգամ պաշտոնական տվյալներով, առանց հայերի ու ադրբեջանցիների Մ.Սահակաշվիլուն տրված ձայների քանակը չգերազանցեց 40%-ը:

Եթե ադրբեջանցիների առումով պատկերն առավել պարզ ու կանխատեսելի էր, հաշվի առնելով այն, որ ունեին իրենց ընդդիմադիր թեկնածուն (թեպետ նա ընտրություններից առաջ հանեց իր թեկնածությունը), ապա վիրահայության դիրքորոշումների մասին բավական դժվար էր դատել ընտրություններից առաջ և կանխատեսել նրանց ընտրական վարքագիծը:

Դեռևս 2007թ. նոյեմբերյան ցույցերի ժամանակ արդեն կարելի էր նկատել, որ հայկական կողմը բավական պասիվ դիրքորոշում էր որդեգրել երկրում ընթացող քաղաքական գործընթացների հանդեպ: Որպես նոյեմբերյան ցույցերի ականատես կարող եմ նշել, որ ցուցարարների շրջանում հայեր գրեթե չկային: Իմ այն հարցին, թե որն է այդ պասիվության պատճառը, տեղի ակտիվ հայության մի շարք ներկայացուցիչներ պատասխանում էին. «Սա մեր խաղը չէ»:

Այսպես, դեռ մինչև նախագահական ընտրությունների 2-րդ փուլը պարզ էր, որ վիրահայությունը մեծ մասամբ անտարբեր է երկրում ընթացող քաղաքական գործընթացներին:

Պատճառները, ի թիվս այլոց, հետևյալներն են.

- *Վիրահայերն իրենց չեն զգում երկրի լիիրավ քաղաքացիներ* և ընդհանուր առմամբ (հատկապես՝ թիֆլիսահայերը) աշխատում են հեռու մնալ քաղաքական գործընթացներից: Թիֆլիսահայության շրջանում տարածված է այն մտայնությունը, որ, միննույն է, իրենից ոչինչ կախված չէ, իսկ ներկա խառը ժամանակներում առավել նպատակահարմար է աչքի չընկնել և մնալ ստվերում:
- Մյուս կարևոր պատճառն այն էր, որ վիրահայության խնդիրներին սատարող և ոչ մի քաղաքական ուժ (լինի կուսակցություն, թե քաղաքական գործիչ) Վրաստանի քաղաքական դաշտում չկա: Նախագահական ընտրություններին հայտ ներկայացրած թեկնածուներից և ոչ մեկն իր ծրագրերում չի շոշափել ազգային փոքրամասնությունների խնդիրն առհասարակ: Օրինակ՝ Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների միացյալ խորհուրդը մինչև ընտրություններն արդեն իսկ հայտարարել էր,

¹ Մանրամասն տե՛ս,

<http://www.armenianow.com/?action=viewArticle&AID=2728&CID=2696&IID=&lng=eng>,

<http://www.abkhazeti.ru/new/index.php?name=News&file=article&sid=5022>,

<http://www.panorama.am/am/interviews/2008/01/07/baiburt/> և այլն:

² Տե՛ս <http://www.results.cec.gov.ge/olqebi.php?lang=eng>

որ իրենք կատարեն նախագահի այն թեկնածուին, ով կլուծի Ջավախքի առջև ծառայած երկու գոբալ հարց. մեկը հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու հարցն է, մյուսը՝ Ջավախքում քրեակատարողական հիմնարկի կառուցման ծրագրի դադարեցումը¹, ինչի հետևանքով կարող է կտրուկ փոխվել հայաբնակ շրջանի ժողովրդագրական պատկերն ի վնաս հայերի: Բայց թեկնածուներն անտեսեցին այս խնդիրները և ոչ մի խոստում չտվեցին:

- Տեղի հայությունն ընդհանուր առմամբ Մ.Սահակաշվիլուն չի համակրում նրա ազգայնական կեցվածքի և, հատկապես, Ռուսաստանի նկատմամբ վարած քաղաքականության պատճառով: Բայց, միևնույն ժամանակ, հայությունը պասիվ է և ընդդիմադիր շարժման մեջ չի ներգրավվում: Ինչպես նշեցինք, հայությունը ցույցերին նույնպես էական մասնակցություն չցուցաբերեց: Հայերից շատերն անգամ հեզնական ժպիտով են վերաբերվում դրան, նշում, որ այս ցույցերի պատճառն ուղղակի վրացիների ծուլությունն է, որ նրանք աշխատել չեն սիրում, բայց պատրաստ են օր ու գիշեր մասնակցել տարբեր թատերականացված միջոցառումների՝ երգ ու պարով համեմված, հատկապես եթե այն ուղեկցվում է զանգվածային հյուրասիրություններով (մասնավորապես, նոյեմբերյան ցույցերից մեկի ժամանակ ինչ-որ անհայտ անձի կողմից գինի էր հյուրասիրվել ցուցարարներին, որը, պարզվել էր, թունավորված է): Այսինքն՝ հայերը թերահավատորեն են վերաբերվում այս գործընթացներին և հիմնականում գտնում են, որ այն, ինչ կատարվում է, իրենց չի վերաբերում: Հայագրի մի կոշկակար և խանութպան՝ Արթուր Աղաջանյան անունով, որը քաղաքականությունից բավական հեռու էր, նոյեմբերին ցուցարարների առջև ունեցած ելույթում ասել էր, թե ինքը ցավում է, որ վրացիները Վրաստանում վատ են ապրում, իսկ ինքը հայ է և ավելի լավ է ապրում և դա նորմալ չէ: Այս ելույթը խիստ զայրացրել էր տեղի հայության մի սովոր զանգվածի, որոնք վտանգավոր էին համարել նման կարծիքի (թե իբր հայերն ավելի լավ են ապրում Վրաստանում, քան վրացիները) տարածումը վրացիների շրջանում: Շատերն Ա.Աղաջանյանին համարում էին ուղղակի քաղաքականապես ոչ գիտակ կամ ինչ-որ մեկի թելադրանքով գործող անձ, որը չի հասկացել, որ իր այդ ելույթով վնասում է տեղի հայության անվտանգությանը: Պատմությանը հայտնի են շատ դեպքեր, երբ ճգնաժամային իրադրության պայմաններում իշխանությունները փնտրում և գտնում են «քավության նոխագներ», որոնց վրա էլ, սովորաբար, բարդվում են երկրում առկա սոցիալ-տնտեսական դժվարությունները, զանգվածային դժգոհության վեկտորը փոխելով և ուղղելով ազգամիջյան հարաբերությունների հարթություն: Այս տեսակետից նշված ելույթն անհանգստացրել էր վիրահայերին:
- Տեղի հայ (նաև վրացի) մի շարք ակտիվիստների շրջանում տարածված էր այն կարծիքը, թե Վրաստանը խոշոր տերությունների կողմից դիտվում է որպես փորձադաշտ Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Հայաստանում, քաղաքական զարգացումները կառավարելու և ձեռնառու հունով ուղղորդելու համար: Անգամ նշում էին, որ ԱՄՆ հայությունը նույնպես ներգրավված է Վրաստանում ընթացող քաղաքական գործընթացներին և այն տանում է իրենց շահերին համապատասխան սցենարով: Կար կարծիք, թե Վրաստանի դեպքերը Հայաստանում սպասվելիք նախագահական ընտրությունների նախաշեմին իրականացվող գլխավոր փորձն են, որը պետք է փորձարկվի Հայաստանում նույնպես: Այն մտայնությունը, որ այս գործընթացներն ինչ-որ տեղից կառավարվում են, թիֆլիսահայերից շատերին նույնպես դրդում էր հեռու մնալ և ակտիվություն չցուցաբերել:

Այսպիսով, վիրահայության ընդհանուր դիրքորոշումը և ընտրական վարքագիծը կարելի է համարել պասիվությունն ու քաղաքացիական անտարբերությունը:

¹ Ի դեպ, ջավախահայության շրջանում տարածված է այն կարծիքը, թե նշված քրեակատարողական հիմնարկի կապալառուն Հայկ Մանուսյանն է՝ ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրված ՀՀ ԱԺ պատգամավորը: Այս փաստը մեծապես վնասում է Հանրապետական կուսակցության հեղինակությանը տեղում:

Քանի որ միջազգային դիտորդներն առավել կենտրոնացած են եղել մայրաքաղաքում, այդ իրողությունը նվազեցրել է զանգվածային ընտրակեղծիքների հնարավորությունն այնտեղ և արդյունքում, ինչպես հայտնի է, Թբիլիսիում¹ Մ.Սահակաշվիլին խոշոր պարտություն է կրել՝ հավաքելով ընդամենը ձայների 32.5%-ը: Ընդ որում՝ քաղաքի կենտրոնում (Վակե և Սաբուրթալո), որտեղ գերակշռում են էթնիկ վրացիները, նա ստացել է ձայների ընդամենը 28.37% և 27.11%-ը: Մի փոքր ավելի են ձայները Բասնի և Սամգրի թաղամասերում, որտեղ առավելապես բնակվում են թիֆլիսահայերը (համապատասխանաբար՝ 33.73% և 37.85%): Բայց, ընդհանուր առմամբ, մայրաքաղաքը քվեարկել է ընդդիմադիր թեկնածու Լևան Գաչեչիլաձեի օգտին:

Զանգվածային ընտրակեղծիքներ են եղել հատկապես Ջավախքում: Ականատեսների կարծիքով՝ ջավախահայությունն ուղղակի բոյկոտել է ընտրությունները՝ դրանով իսկ արտահայտելով իր անհամաձայնությունը Մ.Սահակաշվիլու ազգայնական քաղաքականության հետ: Ինչպես նշում են ականատեսները, Ջավախքում զանգվածաբար ընտրակաշառքներ են բաժանվել (1 պարկ ալյուր և վաուչեր): Եղել են դեպքեր, երբ մարդիկ հրաժարվել են ընտրակաշառքից: Այս ամենն իրականացվել է Ջավախքում Մ.Սահակաշվիլու վարչակազմին մոտ կանգնած հայության առանձին ներկայացուցիչների կողմից (Վրաստանի ԱԺ հայազգի պատգամավորներ, տեղի հեղինակություններ և ձեռներեցներ): Տեղի է ունեցել նաև վերջիններիս կողմից ընտրակաշառքի յուրացում (Ախալքալաքում յուրացվել է 1300, իսկ Նինոծմինդայի շրջանում՝ 700 պարկ ալյուր): Բացի այդ, նշված օգնությունը նախատեսված է եղել մեկ ընտանեկան զույգի համար, իսկ Ջավախքում ընտանիքները, որպես կանոն, բաղկացած են մեկից ավելի ամուսնական զույգերից, բայց ընտրակաշառքը տրվել է մեկ մեծ ընտանիքին, ավելցուկը կրկին յուրացվել է:

Այս իրողությունները տեղի հայության շրջանում խոր հիասթափություն են առաջացրել այն հայերի նկատմամբ, ովքեր իրենց սոցիալական բարձր դիրքը պահպանելու նպատակով ծառայում են հակահայկական քաղաքականությամբ աչքի ընկնող ներկայիս վրաց իշխանություններին:

Հետևանքները.

- Այսպիսով, անջրպետը, որն առկա էր մի կողմից վիրահայ հասարակական լայն շրջանակների և մյուս կողմից՝ Վրաստանի ներկայիս իշխանություններին սատարող և դրա շնորհիվ բարձր սոցիալ-տնտեսական դիրք ունեցող առանձին հայազգի գործիչների միջև, էլ ավելի է խորանում: Տարածվում է այն կարծիքը, որ վերջիններս կարող են «վաճառել» հայության ազգային շահերը և, լինելով ներկայացուցչական մարմիններում, իրենց ծառայամտությամբ ոչ թե օգուտ տալ, այլ վնասել ազգային հարցերի լուծմանը:
- Ընտրություններից հետո հնարավոր է էլ ավելի բարդանա վիրահայության վիճակն այն պարզ պատճառով, որ իշխանությունները շատ լավ տեղյակ են, որ հայությունն իրականում իրենց ձայն չի տվել, քանի որ, օրինակ, նշված 65% մասնակցությունն Ախալքալաքում, կեղծ և մտացածին թիվ է և ստացվել է զանգվածային ընտրակեղծիքների շնորհիվ (իրականում տեղի իրադրությանը քաջածանոթ անձինք նշում են մասնակցության 15%-ից ոչ ավելի):
- Միննույն ժամանակ, լայնածավալ պետական քարոզչությունը և լուրերի տարածումը, թե իբր հայությունը ձայն է տվել Մ.Սահակաշվիլուն, կարող է հանգեցնել նրան, որ տեղում ընդդիմադիր կեցվածք որդեգրած վրացիների կողմից (իսկ դրանց թիվը մեծ է հատկապես Թբիլիսիի ազգայնական մտավորականության շրջանում) նոր հակահայկական առասպելների կերտման հիմք կդառնա: Նման մտավախությունների համար առիթներ արդեն կան. օրինակ՝ նախագահական ընտրությունների ընդդիմադիր թեկնածու, ադրբեջանցի Ֆազիլ Ալիևը Մ.Սահակաշվիլու դեմ ուղղված իր ելույթներից մեկում նշում է, որ վերջինս իր վարչակազմը լցրել է հայերով (հիշատակելով Լադո Գուրգենիձեի

¹ 2002թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ Թբիլիսիում բնակվում է 82.586 հայ, որը կազմում է քաղաքի բնակչության 7.6%-ը:

նշանակումը վարչապետի պաշտոնում և նշելով, որ վերջինս վրացական ազգանվան տակ թաքցնում է հայկական արմատները): Հայտնի է, թե վրաց քաղաքաբնակ մտավորականության համար որքան ցավոտ և կնճռոտ թեմա է մտացածին հայկական գերիշխանության ձգտումն իրենց մայրաքաղաքում:

Անշուշտ, անցած նախագահական ընտրությունները Վրաստանում հետաքրքիր են իշխանություն-ընդդիմություն հարաբերակցության գնահատման, երկրի ապագայի կանխորոշման և խոշոր տերությունների քաղաքականության բացահայտման իմաստով (սա առանձին և նույնպես խիստ կարևոր հարց է. օրինակ՝ մեր անձնական գրույցներից պարզվեց, որ նոյեմբերյան ցույցերի ժամանակ Վրաստանում գործող միջազգային կազմակերպություններն ու օտարերկրյա դեսպանատների ներկայացուցիչներն ընդդիմադիր շարժման գործիչներին զգուշացրել էին, որ իրենք չեն ճանաչի նոր հեղափոխության արդյունքները Վրաստանում, ինչը, բնականաբար, արդեն իսկ նշանակում է կանխորոշել ընտրությունների արդյունքը հոգուտ գործող նախագահի):

Մինևույն ժամանակ, մեզ համար այս ընտրությունները հատկապես կարևոր են ազգային փոքրամասնությունների խնդիրների համատեքստում, մեր հայրենակիցների տեղի ու դերի քննարկման ու պարզաբանման, հայ համայնքի հեռանկարների արծարծման ու վիրահայության անվտանգության տեսակետից:

*Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ*

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Ֆազիլ Ալիևը՝ նախագահի թեկնածու

2007թ. նոյեմբերին Վրաստանի ԿՀՀ-ն 2008թ. հունվարի 5-ի արտահերթ նախագահական ընտրությունների թեկնածու գրանցեց թբիլիսաբնակ աղբբեջանցի Ֆազիլ Նուրմուհամեդովի Ալիևին¹՝ Վրաստանի աղբբեջանցիների միջազգային խորհրդի (ՎԱՄԽ) նախագահին, ով առաջադրվել էր աղբբեջանական համայնքի, մասնավորապես՝ Վրաստանի աղբբեջանցիների ազգային ասամբլեայի (ՎԱԱԱ) և ՎԱՄԽ-ի կողմից:

Վրաստանի նորագույն շրջանի պատմության մեջ առաջին անգամ է, որ աղբբեջանցիներն առաջ քաշեցին նախագահի սեփական թեկնածու: Նախատեսվում էր, որ Ֆ.Ալիևի ընտրազանգվածը, բացի Քվեմո-Քարթլիի, Թբիլիսիի, Կախեթի, Շիդա-Քարթլիի աղբբեջանցիներից, կլինեն նաև Աջարիայի և այլ շրջանների մահմեդականներ: (Նշենք, որ Վրաստանում ապրում են իսլամադավան մի շարք էթնիկ խմբեր՝ մահմեդական օսեր, չեչեններ, ինգուշներ, թուրք մսխեթցիներ, ավարներ, թաթարներ, դագախներ, ուզբեկներ, թաջիկներ և այլն):

Ֆ.Ալիևի նախընտրական շտաբի պետ նշանակվեց ՎԱԱԱ նախագահ Դաշգին Գյուլմամեդովը, ով վարչակարգի ամենաարմատական ընդդիմախոսներից է և իշխանությունների, այդ թվում՝ նախագահ Մ.Սահակաշվիլու և ներքին գործերի նախարարի հասցեին թույլ է տվել ամենակոշտ որակումներ: 2007թ. նոյեմբերի 27-ին Վրաստանի իրավապահ մարմինները ձերբակալեցին Դ.Գյուլմամեդովին և նրա եղբորը՝ Մուրադ Գյուլմամեդովին: Հետագայում նրանք ազատ արձակվեցին, ինչը որոշակիորեն նպաստեց Դ.Գյուլմամեդովի քաղաքական հայացքների փոխմանը:

Նշենք, որ 2007թ. նոյեմբերին Թբիլիսիում ընդդիմադիր ցույցերի շրջանում (որոնց մասնակցում էին նաև աղբբեջանական համայնքի հազարավոր ներկայացուցիչներ), ընդդիմության մի շարք առաջնորդներ ձերբակալվել են: Նրանց հիմնական մասը հետագայում ազատ է արձակվել, սակայն վերջիններիս նկատմամբ հարուցվել են քրեական գործեր:

Ինչ վերաբերում է Ֆ.Ալիևին, ընտրություններից առաջ Աղբբեջանի նախագահ Հ.Ալիևին գրված նամակում վերջինս նշել է, որ Բաքվում ծեծի է ենթարկվել իր դպրոցական որդին: Ստեղծված իրավիճակում՝ ընտրությունների նախօրեին, Ֆ.Ալիևը հրաժարվեց իր թեկնածությունից: Ակնհայտ է, որ վերջինս առաջադրվել էր ոչ թե հաղթանակ տանելու, այլ աղբբեջանական համայնքին վերաբերող հիմնահարցերին քաղաքական հնչեղություն տալու ակնկալիքով:

¹ Ֆազիլ Նուրմուհամեդովի Ալիևը ծնվել է Թբիլիսիում, 1963թ.: 1984թ. ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտը: 1988-ից եղել է Վրաստանի ազգային շարժման ակտիվիստ, առաջին նախագահ Զ.Գամսախուրդիայի աջակիցներից: 1990-1991թթ. նշանակվել է Գարդաբանիի քաղաքապետ, իսկ 1992-ից Գարդաբանիի շրջանի ադմինիստրացիայի ղեկավարի տեղեկալ: 2003թ. Դեմոկրատական վերածննդի կուսակցության ցուցակով ընտրվել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, իսկ 2006-ին՝ Վրաստանի աղբբեջանցիների միջազգային խորհրդի նախագահ: 2005թ. հունիսին սեփական տան դիմաց, ըստ իր վարկածի, իշխանությունների կողմից իրականացված հարձակումից հետո ստիպված է եղել հեռանալ երկրից: Նա բազմաթիվ անգամներ իշխանություններից սեփական անձի անվտանգության երաշխիքներ է պահանջել:

Աղբբեջանական դիսկուրսը Վրաստանում

Աղբբեջանցիները, որոնք վրացիներից հետո ամենամեծ էթնոդավանական խումբն են, հավաքական ձևով ապրում են Քվեմո-Քարթլի¹ նահանգում, ինչը հիմնականում նկատի է առնում Աղբբեջանի և Հայաստանի սահմանակից Մառնեուլի, ինչպես նաև Գարդաբանի, Բուխիսի և Դմանիսի շրջանները:

1989թ. խորհրդային շրջանում Վրաստանում ապրում էր մոտ 307,6 հազար աղբբեջանցի: 2002թ., վերջին մարդահամարի տվյալներով, աղբբեջանցիների թիվը նվազել է մինչև 284,8 հազար: Աղբբեջանցիները թերահավատորեն են ընկալում նման վիճակագրությունը. նրանց շրջանում կա համոզվածություն, որ իրենք կես միլիոն և նույնիսկ ավելի են:

Երկրամասում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի հիմնական պատասխանատվությունը, ըստ աղբբեջանցի ակտիվիստների, կրում են Վրաստանի իշխանությունները, որոնք խտրական քաղաքականություն են վարում աղբբեջանական փոքրամասնության նկատմամբ, դաժան հաշվեհարդար տեսնում քաղաքական ակտիվություն հանդես բերող գործիչների հետ:

Այսօր Վրաստանի աղբբեջանցիների շրջանում ձևավորվել է որոշակի դիսկուրս, ինչի արդյունքում սահմանվել են աղբբեջանական փոքրամասնության հիմնահարցերը², դիրքորոշումը Վրաստանի և «պաշտոնական» հայրենիքի՝ Աղբբեջանի իշխանությունների նկատմամբ, առանձին դեպքերում՝ նաև իրավիճակից ելք գտնելու ուղիները:

Աղբբեջանական դիսկուրսի մեկ այլ ասպեկտ կապված է Աղբբեջանի իշխանություններից ունեցած դժգոհության հետ: Ճիշտ է, Բաքվից աղբբեջանցիները ստանում են որոշակի սոցիալական օգնություն, սակայն դա բավարար չէ: Խնդիրն այն է, որ Բաքուն, ձգտելով պահպանել ռազմավարական գործընկերությունը Թբիլիսիի հետ, ամեն կերպ փորձում է ազդել աղբբեջանական համայնքի գործողությունների վրա՝ դրանք դարձնելով զսպված: Պաշտոնական Բաքուն չի կիսում աղբբեջանցիների այն մտայնությունը, թե իշխանություններն աղբբեջանցիների նկատմամբ խտրական քաղաքականություն են իրականացնում, այլ ստեղծված հիմնահարցերը հիմնականում ձգտում է բացատրել Վրաստանում առկա տնտեսական խնդիրներով և աղբբեջանցիների՝ վրացերենին չտիրապետելու հանգամանքով:

Այս իրողությունը, սակայն, չի խանգարում, որպեսզի Աղբբեջանում Վրաստանի աղբբեջանցի գործիչները գործունեության պարարտ հող գտնեն: Հենց Աղբբեջանում (նաև Թուրքիայում) են տեղի ունենում աղբբեջանական կազմակերպությունների բազմաթիվ միջոցառումներ: Այնպես որ՝ ցանկացած պահի Բաքուն Թբիլիսիի դեմ որպես կռվան կարող է օգտագործել աղբբեջանական գործուն, որի ազդեցությունը Վրաստանում աստիճանաբար ուրվագծվում է: Սակայն այս փուլում Թբիլիսիի նկատմամբ նման գործելակերպը Բաքվին ձեռնառու չէ: Պատահական չէ, որ Բաքվի ԱԳՆ-ն իր տարածած հայտարարության մեջ նշում է, որ ընտրությունները Վրաստանում անցել են դեմոկրատական ճանապարհով:

¹ Աղբբեջանցիներով բնակեցված շրջանները վրացիները պաշտոնապես անվանում են Քվեմո-Քարթլի, որը համանուն նահանգի անունն է, իսկ աղբբեջանցիներն այն հետևողականորեն անվանում են Բորչալու՝ դիտարկելով «Հնագույն Բորչալուն» պատմական Աղբբեջանի անքակտելի մաս, որտեղ ապրել են անհիշելի ժամանակներից: Այս իրողությունները կապված են այն առասպելաբանության հետ, որ գոյություն ունի թե՛ Աղբբեջանում, թե՛ Վրաստանում, իսկ տվյալ պարագայում սպասարկում է Վրաստանի աղբբեջանցիների էթնոքաղաքական պահանջները: Աղբբեջանցիները, որպես կանոն, դժգոհում են, որ Թբիլիսին փոխում է աղբբեջանական տեղանունները վրացականով:

² Աղբբեջանական համայնքի ղեկավարներն առանձնացնում են երեք հիմնական խնդիրներ՝ կապված հողի, կրթության և լեզվի հետ: Հողի խնդիրն առաջ է եկել նախագահ Է.Շևարժնաձեի օրոք իրականացված ագրարային բարեփոխումների ժամանակ, ինչի արդյունքում հիմնականում հողագործությամբ և գյուղատնտեսական ապրանքների վաճառքով զբաղվող աղբբեջանցիների մեծ մասը դուրս է մնացել հողի սեփականաշնորհման գործընթացից և այսօր ստիպված է աշխատել վարձակալած և վրացիներին պատկանող հողակտորներում: Հույսերը, թե Մ.Սահակաշվիլին կարող էր լուծել այդ հիմնախնդիրը, չիրականացան: Աղբբեջանցիները բավարար չեն տիրապետում վրացերենին (բացառությամբ Թբիլիսիում ապրող աղբբեջանցիների), ինչը չի նպաստում նրանց ինտեգրմանը: Խնդիրն այն է, որ աղբբեջանական դպրոցներում, որոնց քանակը տարեցտարի ավելի է նվազում, վրացերենի ուսուցումը վատ է կազմակերպված: 2005թ. Կրթության մասին օրենքի համաձայն՝ Վրաստանի բոլոր դպրոցները պետք է անցնեն վրացական ուսուցման համակարգին՝ պահպանելով ազգային լեզվի ուսուցումը: Այս հանգամանքը բացասաբար է դիտարկվում աղբբեջանցիների կողմից, որոնք ձգտում են աղբբեջաներենը դարձնել տարածաշրջանային պաշտոնական լեզու:

Հնտրություններում աղբբեջանցիների մասնակցությունը

Հստ պաշտոնական տվյալների՝ Վրաստանի աղբբեջանական շրջաններում մասնակցությունը բավական բարձր է եղել՝ մոտ 60% և ավելի: Սակայն ըստ այլ աղբբությունների՝ իրականում մասնակցությունը ցածր է եղել: Աղբբեջանցիներն իրենց ձայնը (մոտ 75%) տվել են Մ.Սահակաշվիլուն և կողմ են եղել Վրաստանի անդամակցությանը ՆԱՏՕ-ին (տե՛ս նաև աղյուսակը): Մասնակցությունը բավական բարձր է եղել հատկապես Մառնեուլի շրջանում, որտեղ Մ.Սահակաշվիլու օգտին քվեարկել է ընտրողների մոտ 89%: Այսպես, Մառնեուլից հետո Սահակաշվիլուն առավել ձայն տված շրջանը Բոլնիսն է՝ մոտ 85%, հաջորդը՝ Դմանիսին՝ մոտ 82%, ապա՝ Գարդաբանին՝ մոտ 71% և Ռուսթավին՝ մոտ 42.17%: Նույն Ռուսթավիլում, որը Քվեմո-Քարթլի նահանգի վարչական կենտրոնն է և Սահակաշվիլուն ամենաքիչ ձայն տված շրջանը /նահանգի կտրվածքով/, ընդդիմության միասնական թեկնածուն՝ Լևան Գաչեչիլաձեն, հավաքել է բավական բարձր ցուցանիշ՝ մոտ 32%: Գարդաբանիում վերջինս հավաքել է մոտ 12%, Բոլնիսում և Դմանիսիիում՝ մոտ 8%, և բնականաբար ամենաքիչը՝ Մառնեուլում՝ մոտ 6%:

Հատկանշական է, որ քաղաքատիպ բնակավայրերում /որտեղ գյուղական բնակչության հետ համեմատած կան աշխարհայացքային տարբերություններ/, Սահակաշվիլին քիչ ձայներ է հավաքել, իսկ գյուղական շրջաններում, որտեղ կախվածությունը տեղական վերնախավից առավել մեծ է, և կան այլ գործոններ նույնպես, Սահակաշվիլին հավաքել է ձայների մեծամասնություն:

Այսպիսով, օգտագործելով ճնշումներն աղբբեջանցի գործիչների դեմ, ինչպես նաև ունենալով վարչակազմին մոտ կանգնած ֆինանսական և այլ կարգի ռեսուրսների տիրապետող Վրաստանի աղբբեջանցիների և Բաքվի աջակցությունը՝ Մ.Սահակաշվիլին կարողացավ աղբբեջանաբնակ շրջաններում իր համար ցանկալի ցուցանիշներ ահապոսկել, ինչը, կարելի է ասել, վճռորոշ դերակատարություն ունեցավ նրա հաղթանակի հարցում:

Հետաքրքրական է, որ ընտրություններից հետո տված հարցազրույցում վարչակազմի նկատմամբ իր կոշտ դիրքորոշմամբ հայտնի Դ.Գյուլամեդովը նշում է, որ աղբբեջանական շրջաններում ընտրություններն անցել են արդար, և որ իրենք պատրաստ են համագործակցել Մ.Սահակաշվիլու վարչակազմի հետ, եթե վերջինս կատարի իր նախընտրական խոստումները:

Այս հանգամանքը մեկ անգամ ևս ապացուցում է, որ աղբբեջանական համայնքը հիշյալ փուլում չի ունենա իրեն առաջնորդող ընդդիմադիր գործիչներ, հետևաբար և առաջիկայում իր գործողություններում կլինի զուսպ և, ընդհանուր առմամբ, վերահսկելի՝ պայմանավորված վերը նշված գործոններով:

Վրաստանում 2008թ. հունվարի 5-ի նախագահական ընտրությունների արդյունքները հիմնական աղբբեջանաբնակ շրջաններում¹

Շրջանը	Լևան Գաչեչիլաձե	Արկադի Պատարկաշվիլի	Դավիթ Գամկրելիձե	Շավլա Նաթելաշվիլի	Միխայիլ Սահակաշվիլի	Գեորգի Մախաշվիլի	Իրինա Սարիշվիլի
Ռուսթավի	14680 (31.54%)	2950 (6.34%)	2361 (5.07%)	3900 (8.38%)	19632 (42.17%)	752 (1.62%)	96 (0.21%)
Գարդաբանի	4764 (11.55%)	1367 (3.31%)	950 (2.3%)	2150 (5.21%)	29135 (70.62%)	126 (0.31%)	31 (0.08%)
Մառնեուլ	3462 (5.6%)	483 (0.78%)	1447 (2.34%)	410 (0.66%)	54709 (88.5%)	43 (0.07%)	37 (0.06%)
Բոլնիս	2597 (7.55%)	567 (1.65%)	710 (2.07%)	523 (1.52%)	29054 (84.52%)	54 (0.16%)	39 (0.11%)
Դմանիսի	817 (7.02%)	587 (5.04%)	178 (1.53%)	180 (1.55%)	9486 (81.49%)	11 (0.09%)	13 (0.11%)

Արարս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

¹ <http://www.results.cec.gov.ge/?lang=eng>.

ПРОТИВОСТОЯНИЕ ПРЕЗИДЕНТА СААКАШВИЛИ И ОППОЗИЦИИ В ГРУЗИИ

Я думаю, что нет серьезного различия между двумя стратегиями, которых могут придерживаться президент Михаил Саакашвили и оппозиция в преддверии парламентских выборов, которые состоятся весной этого года. Первая стратегия заключается в переговорах между президентом и оппозицией, в попытках найти диалог, кооптировать оппозицию во власть. Вторая – в нежелании идти на контакт с властью, в отказе от переговоров.

На самом деле, переговоры время от времени идут. Не исключено, что ряд представителей оппозиции могут войти в правительство. Саакашвили периодически говорит об этом. В то же время принципиально это не изменит мнение оппозиции. Парламентские выборы скоро, и оппозиции невыгодно снижать градус протеста. Напротив, повышение температуры протеста выполняет мобилизующую функцию и для оппозиции, и для электората.

Так что оппозиция по-прежнему будет заявлять о непризнании легитимности президентских выборов 5 января. Но это тактический шаг, элемент парламентской кампании. Последовательное непризнание президентских выборов привело бы к гражданской войне. Оппозиция же на это не идет. Она не ставит перед властью никаких сроков. Задача – мобилизовать протестный электорат к парламентским выборам.

Непризнание легитимности выборов президента – это одна из козырных карт оппозиции. Поэтому я не думаю, что оппозиция пойдет на серьезные уступки при переговорах с властью. Все-таки оппозиция довольно успешно провела президентскую кампанию. Саакашвили был близок к поражению, поэтому уступки накануне выборов в парламент будут восприняты как слабость оппозиции.

Что касается ее консолидации, вплоть до формирования единого списка на выборы, то теоретически все возможно. Однако дальнейшее объединение оппозиции вряд ли состоится. Лейбористы предпочитают выступать отдельно. Возможное снижение проходного барьера до 5% также не создает условий для объединения оппозиции, так как многие могут посчитать, что этот барьер им вполне по силам. Возможен союз между *Новыми Правыми* и *Объединенной оппозицией* во главе с Леваном Гачечиладзе. Но здесь нельзя исключать выхода отдельных партий из *Объединенной оппозиции*.

После парламентских выборов ситуация серьезно изменится. Не исключен успех оппозиции. Поэтому вполне возможна консолидация оппозиции внутри парламента, который будет противостоять президенту, консолидирующим фактором станет борьба с Михаилом Саакашвили. Это же обстоятельство может привести с течением времени к роспуску парламента и проведению досрочных выборов.

В случае успеха оппозиции также возможно формирование правительства с участием оппозиционеров. До выборов лидеры оппозиции не пойдут в правительство. После выборов такое может быть, так как оппозиция сможет поменять риторику. Она может заявить о том, что это коалиционное правительство, формирование которого является не подачкой со стороны Саакашвили, а признанием успеха оппозиции на парламентских выборах.

*Гия Нодиа*¹

¹ Гия Нодиа - директор Кавказского института мира, демократии и развития, Тбилиси.
<http://www.eurasianhome.org/xml/t/expert.xml?lang=ru&nic=expert&pid=1398&qmonth=0&qyear=0>. 15.01.2008.

НЕКОТОРЫЕ ИНФОРМАЦИОННЫЕ АСПЕКТЫ ВЫБОРОВ В ГРУЗИИ¹

Прошедшие в Грузии президентские выборы оказались весьма интересными с точки зрения информационной составляющей. С одной стороны, выборы сами по себе были неординарными, так как были назначены раньше срока и проходили после столкновений с оппозицией и введения чрезвычайного положения. Кроме того, надо учитывать, что они проходили в период новогодних праздников, когда общий информационный поток по миру спадает, в связи с чем грузинские выборы оказались также в центре внимания СМИ.

Вокруг выборов развернулась настоящая информационная война, в которую были вовлечены как силы внутри Грузии, так и внешние, в особенности российские. Необходимо выделить три этапа информационной войны: в период столкновений с оппозицией, до выборов и после.

В период, когда в Тбилиси проходили волнения, и в начале сентября было введено чрезвычайное положение, была запрещена работа всех СМИ страны, кроме общественного телевидения. Оппозиционная телекомпания «Имеди» была закрыта, а оборудование – разгромлено ОМОНОм. В этот период единственным источником информации о том, что творится в Грузии, являлись местные блоггеры, которые оперативно извещали о положении в стране. Так, наиболее читаемым блоггером стал Грант из Тбилиси (<http://athanatoi.livejournal.com/>). Кроме того, информацию предоставляла редактор сайта «Новости-Грузия» в своем дневнике (<http://elenaim.livejournal.com/>). А также некий Александр из того же издания (<http://geoinlaz.livejournal.com/>). Интересно, что 8 ноября дневник *elenaim* вообще перестал обновляться, а блог *geoinlaz* был полностью удален.

Информационная война шла в последние дни перед выборами на уровне публикации рейтингов кандидатов, которые очень сильно разнились между собой. Об этом можно судить по представленной ниже выборке из представленных общественности различных рейтингов:

Саакашвили 41,7%, Гачечиладзе 11,1%, Патаркацишвили 6,5%
Саакашвили 61,1%, Гачечиладзе 5,2%, Патаркацишвили 2,9%
